ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆՆԵՐ

Հայրենները ավանդաբար համարվել են սիրո և պանդխտության թեմայով հորինված երգեր, սակայն հայրենների երգաշխարհի խորամուխ քննությունը բերում է այլ եզրահանգման: Որքան էլ զարմանալի է թվում, գրվել են նաև հոգևոր հայրեններ, որոնք ուղղակիորեն հակադրվում են սիրո հայրենների ոգուն: Իրողությունն այն է, որ հայ միջնադարյան տաղերգուները ևս գրել են բազմաթիվ անհատական հայրեններ, որոնց մեջ մեծ թիվ են կազմել նաև կրոնական թեմայով հայրենները: Բնական է, և Հովհաննես Պլուզ Երզնկացու նման բանիբուն գիտնական վարդապետի գրած հայրենները պիտի բխեին նրա կրոնական աշխարհայացքից: Անհատական հայրենների այդ շարքերը Աս. Մնացականյանը զետեղել է իր կազմած ժողովածուի Բ գրքում, մինչդեռ հատուկ ուշադրություն ենք ուզում հրավիրել այն փաստին, որ նույն ժողովածուի Ա գրքում՝ ժողովրդագուսանական հայրենների շարքերում ևս հանդիպում ենք հոգևոր հայրենների: Ասել, որ գուսանները կհորինեին հոգևոր հայրեններ, անհավատալի կլինի: Մնում է պնդել, և դա ապացուցվում է Ա և Բ գրքերում հանդիպող նույն հայրենների համեմատությամբ, որ անհատական հայրենների շարքերից հոգևոր հայրենները թափանցել են ժողովրդագուսանական հայրենների տաղաշարքեր: Գուսանաժողովրդական հայրենների կատարողներն ու հեղինակները, բնականաբար, աշխարհիկ մարդիկ էին, ովքեր հորինում էին իրենց երգերը կենցաղային, ծիսական արարողությունների կատարման համար, ասենք՝ հարսանեկան երգեր, թաղման ծիսական երգեր, սիրո, վայելքի ու խրախճանքի երգեր և այլն: Սակայն հոգևոր բովանդակությամբ հայրենների հեղինակները գուսանները չեն կարող լինել՝ հաշվի առնելով հենց միայն աշխարհայացքային տարբերությունները: Բայց և ակնհայտ է, որ ավելի ուշ դարերում հոգևոր հայրենները խառնվում են աշխարհիկ բովանդակությամբ հայրեններին, մասնավորապես խոսքը վերաբերում է Ա/ՁԲ և Ա/ՁԳ հայրենային տաղաշարքերին: Ասվածը փորձենք հիմնավորել օրինակներով.

Հոգին հողվերոքն անցաւ
Ու զմարմինն ի հողն անիծեց.
Մարմինն ի հողուն ի դուրս
Հոգուն մէկ խօսօք վճարեց.
- Ըզմեղքն ես և դու արանք,
Յետև՝ իմ երեսն ամաչեց,
Ես հող էի, հող դարձա,
Քո ամալն, որ ըզքեզ բռնեց. Ա/Կ, 1-8[1]*:*

Սրա այլ տարբերակներն են Ա/ՁԲ, 215-222 և Ա/ՁԳ, 290-300 հայրենները: Նկատենք, որ Բ/Ե, 201-208 հայրենը Հովհաննես Պլուզի անհատական հայրենն է, որն ունի

[1] Հայրեններ, Կազմեց Աշ. Մնացականյան, Երևան, 1996:

որոշ փոփոխություններ, մասնավորապես տողերի ետևառաջություն, երբ համեմատում ենք նշված հայրենային միավորների հետ: Պարզ է, որ Պլուզի անհատական հայրենը, կրելով որոշ փոփոխություններ, թափանցել է ժողովրդագուսանական հայրենների նշված երեք շարքերի մեջ: Նշենք նաև, որ այդ հայրեններում շոշափված է հոգու և մարմնի խնդիրը, որը մեզանում հատուկ ուսումնասիրության նյութ է դարձել Ա. Դոլուխանյանի կողմից.

Զերկուսն ի մէկտեղ բերած,
Զէտ ընկեր՝ կ՚ասեն, թէ պահէ,
Ու չորս բնութիւնս օտար
Հետ իրաց՝ կ՚ասեն, թէ սազէ.
Հինգ դուռնէ ի բաց թողած,
Զայդ ամուր կ՚ասեն, թէ պահէ.
Հոգիս իմաստնոց միջին
Զէտ կրակ, որ զմոմն հալէ. Ա/ՀԲ, 721-728, Ա/ՀԳ, 162-169:

Ահա մի հայրեն էլ, որում ևս հոգու և մարմնի խնդիրն է դարձել քննարկման առարկա, սակայն այս դեպքում էլ կրկին գործ ունենք Հովհաննես Պլուզ Երզնկացու անհատական ստեղծագործության հետ, որը թեև հայրենների անհատական շարքերում չի ներառված, սակայն Արմենուհի Սրապյանը այն հրատարակել է Պլուզին նվիրված իր ուսումնասիրության մեջ[2]: Հոգու և մարմնի հարաբերակցությունը արծարծող բերված երեք հայրենն էլ Պլուզի անհատական հայրեններն են, որոնք մուտք են գործել, այսպես կոչված, քուչակյան, այսուհետ արդեն գուսանաժողովրդական անվանված հայրենների շարքերը.

Զերկու ընկերացն ասեմ,
Մէկն հողն է, մէկն՝ հոգին.
Հոգին թէ ի վեր քաշէ՝
Հողն ծանտր, ի վար կու հակէ.
Վախեմ, թէ հողոյս լսեմ,
Նա հոգոյս լոյսն պակասէ.
Հետ հոգոյն ամ ո՞վ թռչի,
Երբ նորա տունն հեռի է. Ա/ՀԲ, 729-736, Ա/ՀԳ, 170-180:

Այս հայրենների կապակցությամբ Ա. Սրապյանը գրել է. «Սակայն, մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ Քուչակին վերագրվող քերթվածներն ընդհանրապես, որպես անհատական ստեղծագործություն վիճելի են, իսկ խրատական քառյակներն ավելի ևս, պետք է ասենք, որ թե՛ մեր և թե՛ մյուս մատենադարանների բանասերներին հայտնի ձեռագրերից և ոչ մեկը քառյակների «Երկուսն ի մէկ տեղ բերած» շարքը չի

[2] Տե՛ս **Ա. Սրապյան**, Հովհաննես Երզնկացի, Ե., 1958, էջ 161:

նշում որպես Քուչակի ստեղծագործություն և ոչ էլ Ֆրիկի: Ինչպես նշեցինք, այդ շարքը ձեռագրերում կա՛մ անանուն է և կա՛մ Պլուզին վերագրած»[3].

Զհինգ դուռն է ի բաց թողած,
Զայդ ամուր, կ՝ասեն, թէ փակէ՛.
Այս բերդս է գանձով ի լի
Ու հազար չարկամ կու մտնէ.
Չարկամս ես ի յիս ունիմ,
Զդուռնին զամէնն կու քակէ.
Թագաւորս է ի ներս նստած,
Նա զայս ալ գողն կու խաբէ. Ա/ՁԲ, 737-744, Ա/ՁԳ, 181-188:

«Եթե Աստվածաշնչի Հին Կտակարանում հրեական ժողովրդական բանահյուսությունից եկող «Երգ-երգոց» սիրո պոեմը հետագա շրջանի քրիստոնեական Եկեղեցու հայրերի և գործիչների կողմից մեկնաբանվում է որպես այլաբանություն՝ Եկեղեցու և Քրիստոսի միմյանց նկատմամբ ունեցած անսահման սիրո, ապա Քուչակյան հայրեններում առկա է ճիշտ հակադարձ երևույթը. քրիստոնեական հասկացությունները, Եկեղեցին և նրա հետ կապված իրողությունները դառնում են այլաբանություն բանաստեղծի համար՝ արտահայտելու աշխարհիկ սիրո հետ կապված ամենատարբեր ապրումները: Այդ սիրերգներն ամբողջովին «աշխարհի բան» են.

- Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծծերդ է կանթեղ ի վառ,
Երթամ ես ժամկոչ ըլլամ, գամ լինիմ տաճարիդ լուսարար:
- Գնա՛, ծո՛ տղա՛ տխմար, չիվայլես տաճրիս լուսարար,
Երթաս դուն խաղով լինաս ու թողուս տաճարս ի խավար:

Այս հայրեններում Եկեղեցին իր պատմությունը ներկայացնող հայտնի մարգարեներով ստորադասվում է աշխարհիկ կյանքի թելադրած պահանջներին, հոգին և մարմինը միասնական ձևով հանդես են գալիս որպես մարմնի շահերի նախանձախնդիր պաշտպան, որի կարևորությունը կգիտակցեին անգամ Դավիթ մարգարեն և նրա դասակիցները.

Դաւիթ մարգարեն, ի՛մ յոյս, շատ մեղքունք ունիմ, թէ թողուս.
Եարիկ մի սիրեր եմ ես՝ պարապար հետ երկու լուսոյս.
Հընցկուն աղտորիկ եարուկ, թէ ի խուցքդ գայ, նայ թողուս.
Յորեկն սաղմոս ասես, լոք գիշերն ի ծոցիկտ առնուս:

Քուչակյան հայրենները պատկերում են, թե ինչպես ոչ պաշտոնական գրականության մեջ մարմինը հանդես է գալիս հաղթանակած, նա լրիվ իր իրավունքների տերն է»[4]: Այս կարծիքի հետ լիովին համաձայն ենք, երբ այն վերաբերվում է հայրեն-

[3] **Ա. Սրապյան**, Հովհաննես Երզնկացի, Ե., 1958, էջ 103:
[4] **Ա. Դոլուխանյան**, Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ, Ե., 1987, էջ 172-

ների մինչ այժմ քննարկված տեսակներին, մասնավորապես սիրո հայրեններին, մինչդեռ հոգևոր հայրենների դեպքում գործ ունենք տրամաբանորեն հակառակ իրողության հետ, որը ակնհայտ դարձավ նաև հոգու և մարմնի հարաբերակցությունը արծարծող հայրեններում, սակայն բերենք այլ հոգևոր հայրեններ ևս, որ խնդիրն ավելի ամբողջական երևա.

Հանցեղ կու հանէ սրտիս,
Որ հագնեմ ես այլ մազեղէն.
Հագնեմ ու լեռներ ընկնիմ,
Լուկ ուտեմ զամէն խոտեղէն.
Կասկած կայ իմ սրտիս,
Կու զարհուրիմ ի մահուանէն.
Վախեմ, թէ անէրէց մեռնեմ
Ու տանեն թաղեն անօրէն. Ա/ՀԲ, 1201-1208:

Այստեղ արդեն մարմնի իրավունքը լիակատար պարտություն է կրել, թվում է՝ այս հայրենի քնարական հերոսը վարքի կամ վկայաբանության հերոսն է՝ իր մարմինն արհամարհող, առաջնությունը հոգուն ընծայող: Գուսանական արվեստի, նաև հայրենների աշխարհիկ ոգու դեմ դարավոր պայքարի արդյունքում կարծես գտնվել է մի միջոց, որով պիտի մեղմվեն աշխարհիկ տրամադրությունները, այն է՝ ստեղծվել են հոգևոր հայրեններ, որոնք երգվում են ժողովրդական հավաքույթներում: Թերևս այդ նպատակով էր Ներսես Շնորհալին ստեղծել իր հանելուկները, որոնք պիտի երգվեին «ի գինարբուս եւ ի հարսանիս»՝ այդպիսով շեղելով ժողովրդին աշխարհիկ հույզերից և վերադարձնելով նրա հոգևոր արժեքները, որոնք 10-14-րդ դարերում քաղաքային դասի համար ետին պլան էին մղվել, և նրանց կողմից առաջնությունը տրվում էր «աշխարհի բանին»: 5-10-րդ դարերի հայ քնարերգության մեջ «ակնհայտ է Ս. Գրքի ազդեցությունը թե՛ աշխարհընկալման առումով և թե՛ գեղարվեստական-արտահայտչական առումով: Հայոց քնարը որոշ իմաստով դեռ հավատարիմ արձագանքողն է աստվածաշնչյան օրհնությունների և սաղմոսների, բայց հայացքն հառած դեպի մի սրբազան նպատակ՝ երկիրը դրսեկ նվաճողներից պաշտպանելու և անկախ թագավորությունը վերականգնելու»[5]: Այս դիպուկ և ճշգրիտ բնութագիրը կարծես իր հեռավոր արձագանքն է գտնում նաև հոգևոր հայրեններում: Ահա մի հայրեն, որում հոգևոր թեման հարակից արտահայտում է նաև ազգային-հայրենասիրական որոշ երանգներ.

Պիտէր կաթ մի յայն գինուն,
Որ խմեց Ենովք, Եղիա.
Խմեց տէր Գրիգորն Հայոց
Ասաց, թէ՝ Հանգայ.
Հայե՛ր, ամ դուք է՞ր կու լայք,
Գիտէք, որ ձեր Տէրն տի գայ.

173:

[5] **Պ. Խաչատրյան**, Գանձարան հայ հին բանաստեղծության, էջ 6:

Շատոց մթան լոյս արեր,
Կու վախէք, թէ ձերն ուշանա՞յ. Ա/ՀԲ, 483-490, Ա/ՀԳ, 74-81:

Հայրենի մեջ հայ ժողովրդին է ուղղվում խոսքը, թե երկնային Տերը պիտի գա և բերի փրկության լույսը: Քրիստոնեական լավատեսությամբ է ավարտվում հայրենը, որը մեզ հիշեցնում է ինչպես Ֆրիկի «Գանգատ»-ի ազգային բողոքը, այնպես էլ Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պատմաողբի լավատեսական ավարտը՝ կապված քրիստոնեության հաղթանակի՝ խաչակրաց արշավանքի հետ: «Հայ Եկեղեցու ծիսակարգն ընդհանրապես, և շարականները՝ մասնավորաբար, արևմտաքրիստոնեական Եկեղեցու՝ իրենց զուգահեռներից տարբերվում են լավատեսական շնչով: Սա առհասարակ հայ մատենագրության բնորոշ հատկանիշներից է՝ իբրև ազգային ոգու արտահայտություն, որ բարեպատեհ զուգադիպությամբ իր հիմնավորումը գտավ քրիստոնեական վարդապետության մեջ»[6]: Մյուս կողմից՝ ազգային-հայրենասիրական լիցքերը կապվում են հոգևոր երգին՝ դառնում հայ շարականների տիպական առանձնահատկություններից մեկը. «Ս. Գրքի կողքին հոգևոր երգերի աղբյուր ու նյութ են դառնում նաև ազգային մատենագիրների գործերը, նշանավոր հոգևոր հայրերի վարքը, սրանց ազգային և կրոնական գործունեությունը: Շարականների մեջ մուտք են գործում նաև հայրենասիրական մոտիվներ»[7]: Ակնհայտ է, որ հայ շարականների ազդեցությամբ են հյուսվել նաև հոգևոր թեմայով նշված հայրենները:

Հոգևոր հայրենների մեջ շոշափված է նաև մեղքի և փրկության գաղափարը: Նարեկացու «Մատեանի» ազդեցությունը զգացվում է ողջ հայ գրականության վրա, այս դեպքում նաև հայրենների երգաշխարհում: Անմեղ ծնված մարդն ակամայից հայտնվում է մեղքերի լաբիրինթոսում՝ առանց դույզ-ինչ զգալու իրեն սպասվող փորձությունները:

Երբ ես ի աշխարհս եկի՝
Գառն անպարտ ու մեղք չունէի.
Ի յաւազանէն ծնայ՝
Զէտ զմարգարիտ ցոլայի.
Մեծցայ ու մեղաւոր եղայ,
Յիմ ոտօքս ի մեղք գնացի.
Զկամք սատանային արի,
Յանդենէն խապար չունէի. Ա/ՀԲ, 333-340, Ա/ՀԳ, 356-364:

Սակայն գալիս է մի պահ, երբ մարդն սկսում է գիտակցել իր գործած մեղքերի ծանրությունը, անկեղծ քավությամբ զղջալ և խոստովանել, որ ոչ ոք իրեն չի դրդել մեղք գործելու, այլ ինքը կամավոր է ընկել մեղքերի թակարդը.

Ի յիմ շատ մեղացս ահուն՝
Զիս երերն ու լացն է առեր.

---

[6] Շարական, աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը, Ե., 2001, էջ 9:

[7] **Գ. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Ե., 1980, էջ 205:

Ոչ ով չէ պատճառ եղեր,
Չեմ այլոց ձեռօք խաբուեր.
Յիմ սրտիս կամաւն յօժար,
Յամենայն մեղքի եմ հանդիպեր.
Միայն հակառակ կացեր,
Զօրինաց ցանկն եմ պատառեր. Ա/ՁԲ, 713-720:

Մարդն ստեղծվել է ազատ կամքով, Աստված նրան շնորհել է բանականություն, որով պիտի զսպի իր զգացմունքները, որոնք նրան մղում են սատանայի կամքը կատարելու՝ մեղքեր գործելու: Սակայն մարդու մարմինը թելադրում է իր պահանջները, որոնք մեղսածին են: Ուրեմն՝ մեղքն անխուսափելի է. արդ՝ ի՞նչ է մնում մարդուն, եթե ոչ անկեղծ քավությամբ ու ապաշխարանքով խոստովանել մեղքը, որը մաքրագործման և փրկության ուղին է.

Կանչեմ հօտ ի վեր, Աստուա՛ծ,
Իմ մեղաց ճարակն ի քէնէ.
Երէցն և Աւետարան՝
Աստուծոյ մօտիկ նշան է.
Զինչ շաբթուն որ մեղք գործես՝
Կիրակի զայն խոստովանէ.
Առնուս անթառամ պսակ,
Յանտենին հուրդ զքեզ չը երէ. Ա/Կ, 25-32:

Այս հայրենի այլ տարբերակներն են Ա/ՁԲ, 515-524 և Ա/ՁԳ, 83-91 հայրենները, որոնք ունեն մասնակի տարբերություններ.

Ծառին ճիւղքն որ չոր լինի,
Ո՞վ ասէ, թէ ինքըն ծաղկի.
Սպիտակ մազն որ թուխ ներկի,
Ո՞վ ասէ, թէ իսկի թափի.
Բայց մարդ՝ մեղաւոր ու սև,
Վկայե՛մ, որ կու սպիտակի.
Աստուած մէկ բանիկ կ՚ուզէ,
Որ Մեղայ ասէ ու քաւի. Ա/ԽԴ, 19-26:

Ուրեմն՝ մեղքերի խոստովանանքը փրկում է դժոխքի հրից, որն ուղղակի Նարեկացու Մատյանի հայրենային արձագանքն է, որը մեկ այլ հոգևոր հայրենում արտահայտվել է Աստված և մարդ հարաբերակցության միջոցով:

Հա՛յ իմ մէկ ու մէկ Աստուած,
Մէկութիւնըն քեզ վայել է.
Զով որ դուն ի վեր հանես,
Մարդ ի վայր բերել չը կարէ.
Զան հացն, որ դուն տաս ուտել,
Մարդ իսկի խլել չը կարէ.

Ջուր ի կենաց աղբերէդ
Ով խմէ՝ անմահ մնասցէ. Ա/Կ, 57-64, Ա/ՀԲ, 637-644,
Ա/ՀԳ, 100-110:

Աստծո փառաբանությունն արվում է մարդու հետ համեմատությամբ ու հակադրությամբ, որը բազմաձև գեղարվեստական մարմնավորում է ստացել Նարեկացու Աղոթամատյանում:

Աստծո արարչագործությունը ևս հայրեններում բանաստեղծական արտահայտություն է ստացել.

Օրհնեալ Աստուծոյ անունն,
Որ զբարեաց դռվին է բացեր.
Զաշխարհս գեղեցիկ ստեղծեր
Եւ յերեք դիմաց բաժաներ.
Ըզհրեշտակս ի յերկինս դրեր,
Ադամայ զդրախտն տվեր.
Զերկիրս անասնոց տվեր,
Անբանից տեղիք զսայ շիներ. Ա/ՀԳ, 301-308:

Աստված ստեղծել էր դրախտային մի աշխարհ, սակայն սատանան նախանձեց Ադամին, թե Ադամի ստեղծումից հետո ինքն ընկել է փառքից.

Սատանայ տեսաւ զՄովսէս,
Արգելեց ու պահ մ'ալ իլաց.
- Իմ աստուածախօս Մովսէս,
Մեր Տէրն է՞ր մեզ է խռոված.
Երբ մենք աշակերտ էաք
Աստուծոյ՝ Ադամ չէր ստեղծուած.
Ադամ ի հողոյ ստեղծած,
Մեք՝ ի մեր փառացն անկած. Ա/ՀԲ, 753-760, Ա/ՀԳ, 197-204:

Աստված Ադամին փորձության ենթարկեց, և սատանան՝ կնոջ տեսքով, խաբեց նրան, որը ևս հայրենների նյութ է դարձել.

Եկին, աւետիս բերին
Ադամայ, թէ՝ Նիստ ու խնդայ.
Եդեմ դրախտէն ելար,
Պատճառ ո՞վ եղև, մէկ մ'ասա՛:
Թէ՝ զՕձն ու զԵւայ կ՚ասես,
Նա պատճառ եղև սատանայ:
- Ես քեզ սատանայ եղայ,
Ինձի ո՞վ եղև, մէկ ասա՛. Ա/ՀԳ, 317-324:

Ադամին խաբելու հետևանքով նախաստեղծ մարդը զրկվեց դրախտից:

Քան զԱդամ այլ ինչ հարուստ,
Որ ունէր զդրախտն առնձին.
Սատանայ ի օձ մտաւ,
Օձն՝ յԵւայ, զԱդամ խաբեցին.
Ի պտղոյն ուտել տուին,
Ի փառացն մերկացուցին.
Տերն թզենւոյն տուին,
Ի դրախտէն հանին, վարեցին. Ա/ՀԲ, 809-816, Ա/ՀԳ, 256-263:

Սակայն Ադամի ողբերգությունն իր անձով չի սպառվում, դրախտից զրկվեցին նաև նրա սերունդները՝ ադամորդիները.

Ի յերկնաւորաց դասուն
Սադայէլ երես է շրջեր.
Ի յերկնից յանդունդս է ընկեր,
Ի լուսուն մահրում մնացեր.
ԶԱդամ ի դրախտէն հաներ,
Յանասնոց յերկիրս է ձգեր.
Ամէն Ադամայ որդիք
Այս օտար երկիրս է բնակեր. Ա/ՀԲ, 769-776, Ա/ՀԳ, 213-223:

Կորուսյալ դրախտի որոնումները շարունակվում են: Մարդը գիտակցում է, որ դրախտից զրկվել է Եվայի պատճառով, փորձում է զսպել իր հեթանոսաշունչ մղումները, աշխարհիկ հույզերը, սակայն ապարդյուն: Հնարամիտ մարդը, սակայն, գտնում է դրախտին արժանանալու ճանապարհը.

Ով ողորմութիւն անէ՝
Ի յանտէնըն մուլք կու շինէ.
Մշակն Քրիստոս կու տայ,
Ան պահըն մուլքն կատարէ.
Ծառ մի դրախտէն կ՚առնու,
Ան մուլքին մէջըն կու տնկէ.
Ջուր անմահութեան կ՚առնու,
Ան ծառին տակէն կու բըղխէ. Ա/ԽՀ, 171-178:

Ուրեմն՝ քրիստոնեական ըմբռնմամբ ողորմություն անողը դրախտի կարժանանա: Այսինքն՝ այս աշխարհում բարի գործեր կատարողը, բարություն սերմանողը այն աշխարհում կարժանանա երանավետ դրախտին.

Ով իմ խրատիս լսէ՝

Նա զանանց բարին վայելէ.
Յանդէն պարզերես երթայ,
Ի յումեքէ իսկի չվախէ.
Յորժամ յարութիւն լինի՝
Փողն երեք ձայնիւ տի կոչէ.
Ո՛վ ասդէն բարի կացեր,
Նա՝ զԵկայք ձայն տի լսէ. Ա/ՀԲ, 825-832, Ա/ՀԳ, 272-279:

Սակայն մեղքի բեռան տակ կքած մարդը հանապազ գայթում է, մեղքի զգացումը ճնշում է նրա հոգին, մանավանդ նա միայնակ չէ իր մեղքի հետ, նրա խղճին ծանրացած են աղամական մեղքից մինչև իր ժամանակն ապրած ողջ մարդկության անանուն մեղքերը: Փրկության ճանապարհը բացելու, իր արյունով մարդկության մեղքը սրբելու նպատակով մարդացավ Աստծո Որդին: Մարդն իր բարոյական նկարագրով աստվածային մտակերտվածքի հակապատկերն է դարձել, որի փրկության ճանապարհը փորձում է բացել Հիսուս:

Հիսուսի կյանքը օրինակ պիտի լինի մահկանացուներիս համար: Հոգևոր հայրենների հեղինակները ևս, ինչպես Շնորհալին ու իր հանճարեղ նախորդը՝ Նարեկացին, հավատում են մարդու բարոյական փրկությանը: Փրկության հասնելու համար անհրաժեշտ է ունենալ հույս, հավատ և սեր առ Աստված.

Հաւատն՝ անառիկ բերդիկ,
Ով առնէ զնա հայրենիք.
Թէպէտ թշնամիք ունի,
Որ բերեն ինձ շատ մրճենիք.
Թշնամին հեծել կապէ,
Կու լինայ ի նա նետաձիգ.
Նա զնա մասխարայ դնէ,
Թքանէ զէտ դիմաճիք. Ա/ՀԲ, 761-768, Ա/ՀԳ, 205-212:

Հավատն անառիկ բերդ է, որով պիտի պաշտպանվենք սատանայի հարձակումներից: Իսկ սերն առ Աստված ենթակա է փորձությունների, որով մարդը ճանապարհ է հարթում դեպի փրկության ուղին.

Զով որ կու սիրէ Աստուած,
Սակաւիկ մի աստ կու տանջէ.
Թէ սէր ի սրտանց ունի
Առ Աստուած՝ չարին համբերէ.
Թէ փորձէ նա սէր ունի
Առ Աստուած՝ նա խիստ յօժար է.
Տանջանք կու թուի նմա,
Թէ իւղով զանձն կօծանէ. Ա/ՀԲ, 817-824, Ա/ՀԳ, 264-271:

Պիտի համբերությամբ զինվել, դիմանալ չար սատանայի փորձություններին,

չտրվել չարի գայթակղությանը, զինվել բանականությամբ ու հավատով. այդ է ճշմարիտ ուղին:

Մինչ մարդկությունը կքել էր մեղքի ծանրությունից, լսվում է Քրիստոսի ծննդյան ավետիսը.

Գաբրիէլ իջեալ յերկնից,
Եւ սրբոյ Կուսին աւետեաց.
- Ուրա՛խ լեր, կոյս Տալիթայ,
Զի դժխոյ լինիցիս փառաց.
Ահա յղանաս շնորհօք,
Զոր յառաջն Եսայի ասաց.
Ի քէն ծնանի Քրիստոս,
Որ փրկէ զմարդիկ ի մեղաց. Ա/ՁԲ, 229-236, Ա/ՁԳ, 1-11:

Առեղծվային այդ ծնունդը հղացվել էր Աստծուց, մարմնացել էր Մարիամի միջոցով:

Բանն ի Հօրէ առաքեալ,
Եւ յարգանդ Կուսին բնակեալ.
Առեալ յարենէ Կուսին,
Եւ անշուշտ ընդ Բանին խառնեալ.
Մարմնով ի Կուսէն ծնաւ,
Եւ կնիք Կուսին ոչ խախտեցաւ.
Ծնօղն է Աստուածածին,
Իսկապէս և ծնեալն Աստուած. Ա/ՁԲ, 237-244, Ա/ՁԳ, 12-22:

Բացվում է փրկության և հույսի ճանապարհը, Քրիստոսը գալիս է իր արյունով սրբելու Ադամի մեղքը: «Փրկությունը քրիստոնեական կրոնի հիմնական գաղափարն է, նրա հիմքն ու էությունը: Փրկությունը երկնից արքայության դուռն է: Արդեն իսկ փրկությունն է հանդիսանում Քրիստոսի գերագույն նպատակն ու տնօրենությունը, որով վկայեց. «Չեկա աշխարհը դատելու և դատապարտելու, այլ փրկելու» (Հովհ. ԺԲ 47)»[8]:

Մարիամ լցեալ շնորհօք,
Եւ Հոգւով Սրբով բարբառեալ.
- Անձն իմ ցնծացաւ ի Տէր,
Եւ հոգիս՝ ի փրկիչն Աստուած.
Զքաղցեալս ելից հացիւ,
Եւ զանկեալ բնութիւնս կանգնեաց.

[8] **Ասողիկ եպիսկոպոս**, Մեղքի և փրկության գաղափարը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան», մեջ, Էջմիածին, 1996, էջ 67:

Զիզօրն աթոռոյն ընկեց,
Որ զնախնին մեր զԱդամ խաբեաց. Ա/ՀԲ, 245-252,
Ա/ՀԳ, 23-30:

Նաև հոգևոր հովիվները՝ Եկեղեցու սպասավորները Տիրոջ կողմից կարգվել են, որ հսկեն մոլորյալ հոգևոր հոտին:

Մեր Տէրն այլ էրէց հրամեց.
- Էրէ՛ց, քեզ կ՝ասեմ, դու լսէ.
Ես զքեզ հովիւ եդի,
Թէ դու իմ ոչխարն արածէ. Ա/ԽԸ, 167-170:

Հավատավոր մարդն իր հարաժամ աղոթքով, փրկության հույսը սրտում՝ քավության ու ողորմության խոսքեր է շշնջում՝ հայացքը հառած աղոթարանին:

- Աստնորս է չորս քէօշայ,
Լոյսն ընդ ո՞ր կ՝ելնէ, մէկ ասա՛:
- Լոյս ի յայն տէհէն կ՝ելնէ՝
Ուր քրիստոնէն յաղօթս կու կենայ.
Մէկ մարդ մի այլ՝ զլոյսն թողեր,
Դէմ ի մութ յաղոթ կու կենայ.
Զայն շո՛ւն բնութիւն ունի,
Սատանին մասն կայ ի նա. Ա/ՀԲ, 475-482, Ա/ՀԳ, 66-73:

Աղոթողը դեմքով դեպի արևելք է նայում, որտեղից ծագում է աստվածային լույսը: Սատանայական գիշերը՝ պարտված ու հոգնաբեկ, զիջում է իր դիրքերը արևագալի շողերին, և բացվում է առավոտը՝ աստվածային լույսով:

Հոգևոր հայրեններում արծարծվել են բազմաթիվ կրոնական խնդիրներ, որոնք մեր գրավոր գրականության մեջ հանդես են եկել շարականներում և պարականոն հոգևոր երգերում: Բնական է, հոգևոր և աշխարհիկ սիրո հայրենների մեջ կա ակնհայտ հակասություն, որը բնորոշ է նաև միջնադարյան տաղերգությանն ընդհանրապես: Օրինակ՝ մի՞թե սիրո հայրենների գաղափարախոսության հետ ուղղակի հակասության մեջ չէ հետևյալ հայրենը.

Երբ կին տեսնում՝ ցանկանամ,
Դժոխոց դուռն մօտենամ,
Երթամ յանապատ կենամ,
Ո՛չ տեսնում և ո՛չ ցանկանամ. Ա/Ծ127-130:

Ավելորդ չէ երկրորդել, որ հոգևոր հայրենների հեղինակները միջնադարյան տաղերգուներն են, որոնց անհատական հայրենները մուտք են գործել գուսանաժողովրդական հայրենների տաղաշարքեր: Առաջինը Հովհաննես Երզնկացին է, որը կարծես գտել է այն միջոցը, որով պիտի գուսանական երգերի աշխարհիկ մղումները զսպեր:

Նույն Հովհաննես Պլուզն էր, որ 1280 թ. գրեց «Եղբարց միութեան» կանոնագիրքը՝ այդ աշխարհական միության մանկտավագ Հակոբին նվիրելով «Յակո՛բ, զարթիր ի քնոյ մեղաց» տաղը, ուր աշխարհի մեղքերի մեջ թաթախված Հակոբին հորդորում է մտածել նաև հոգևորի մասին.

Շատ գործեցիր դու մեղք ու չար,
Այդ քո չարեացդ արա վճար,
Մեղայ ասայ սրտովդ յօժար.
Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց[9]*:*

Ահա Պլուզը հորինում է հոգևոր հայրեններ՝ նպատակ ունենալով ժողովրդից սիրված այդ ժանրով բարոյակրթելու հանրությանը, հոգևոր պահանջմունքներ առաջադրելով նրանց, ովքեր ապրում էին մարմնի իշխանության ենթակայությամբ՝ դժոխք դարձնելով իրենց առօրյան: Հայրենների այդ ժառանգությունը իսկապես սիրվեց ժողովրդի կողմից, տարածվեց, հավանաբար կենցաղավարեց ժողովրդական երգերի կյանքով և մուտք գործեց հայրենների տաղաշարքեր: Այդ առումով հատկապես աչքի են ընկնում Ա/ՁԲ և Ա/ՁԳ տաղաշարքերը, որոնք ձեռագրերում խորագրվեցին «Յաղագս հոգոյ և սիրոյ ոտանաւոր է բանս» և «Հայրէն է աստից կարգաւ, հոգոյ և սիրոյ»՝ ընդգծելով այն հանգամանքը, որ տաղաշարքերում հոգևոր հայրենները զուգադրվում են սիրո հայրեններին: Այդպիսով, սիրո հայրեններում մարմնի իրավունքն էր պաշտպանվում՝ հոգուտ աշխարհիկ հեթանոսական ոգու, մինչդեռ հոգևոր հայրեններում առաջնությունը տրվում է հոգուն: Այլ կերպ ասած՝ հոգու և մարմնի դարավոր վեճը հանդես է գալիս նաև գուսանաժողովրդական հայրենների տաղաշարքերում:

Այսպիսով, հայրենների երգաշխարհում ինչպես անհատական, այնպես էլ գուսանաժողովրդական հայրենների շարքերում հանդիպում ենք հոգևոր հայրենների, որոնք հարկ է համարել առանձին ժանրային տարատեսակ՝ բովանդակության և թեմայի թելադրանքով:

[9] **Ա. Սրապյան**, Հովհաննես Երզնկացի, էջ 173: